ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 մարտի 2012թ. № 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 54-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թվականի հոկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության /նշանակման/ մրցույթի կարգը հաստատելու մասին>> N 145-Ն որոշմամբ հաստատված կարգի 70-րդ կետի, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003թվականի հուլիսի 23-ի <<Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական կազմակերպությունների՝ <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>>, <<Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան>>, <<Վերիշենի բժշկական ամբուլատորիա>>, <<Դարբասի առողջության կենտրոն>>, <<Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների նշանակման մասին>> **N** 54-Ա կարգադրության և նրանց հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրերի 2.1 կետի<<հինգ>> տարի բառերը փոխարինել <<մինչև 2012թվականի սեպտեմբերի 22-ը ներառյալ >> բառերով:

2.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. մարտի 19
ք. Կապան